Եթե կառավարությունը խաղաղության համաձայնագրի հիման վրա հրաժարվի գանգատներից, Բաքվում դատվող անձինք կհայտնվեն իրավական առումով անպաշտպան վիճակում: Որպես փոխարինող միջոց՝ մենք աշխատում ենք ընտանիքների հետ, ընտանիքներն արդեն իսկ լիազորություններ են փոխանցում, որպեսզի անհատական գանգատներ ներկայացվեն:

Կարդացեք՝ էջ 4

«Դատելով ցուցումներից, նոր սահմանադրության նախագիծը, որը Փաշինյանը նախատեսում է հանրաքվեի դնել 2026 թ. խորհրդարանական ընտրությունների հետ միաժամանակ, ինչպես արդեն նշել է վարչապետը, կներառի մի կետ, որը կառավարությանը կտա կաթողիկոսի թեկնածուին որոշելու վերջնական իրավունքը»,- գրում է Մինվալ.ազ-ը:

Կարդացեք՝ էջ 6

«Եթե օրենքի ընդունումից հետո որեւէ խանութ ճայթուկ վաճառի, կպարտավորվի նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսնապատիկի չափով տուգանք վճարել»,- 2020-ին զգուշացնում էր նախարարությունը: «Խայտառակություն է: Նորից պետք է արգելել այդ ճայթուկները: Մեր շենքից մի երեխու մատը պոկվել ընկել էր»,- գրում են մեզ:

Կարդացեք՝ էջ 7


# Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 186 (4088), 20 նոյեմբեր, հինգշաբթի, 2025

www.hraparak.am

Բարձրացած աղմուկից հետո Նիկոլ Փաշինյանի ընտանեկան լրատվամիջոցից՝ «Հայկական ժամանակի» կայքից, հեռացրել են Սամվել Կարապետյանի կալանքի մասին աղմկահարույց հրապարակումը: Հիշեցնենք. նախօրեին, երբ դատարանը քննում էր կալանքը փոխելու միջնորդությունը, երեկոյան 19.00-20.00-ի միջակայքում ՀԺ-ն «Սամվել Կարապետյանը կշարունակի մնալ կալանքի տակ» վերնագրով լուր հրապարակեց, որն անմիջապես արտատպվեց այլ լրատվամիջոցներում: Սակայն դատարանն իր վճիռը հրապարակեց դրանից մոտ 12-14 ժամ անց: Միջնորդության քննությունը միայն կեսգիշերն անց ավարտվեց, իսկ որոշումը հրապարակվեց հաջորդ կեսօրին: Հրապարակմանն արձագանքեց նաեւ Կարապետյանի պաշտպան Ռոբերտ Ամստերդամը. «Այժմ արդեն փաստ է, որ Հայաստանում իրականացվում է «հեռախոսային արդարադատություն»: Երեկ, երբ իմ պաշտպանյալ Սամվել Կարապետյանի կալանքի երկարաձգման հարցով դատական նիստը դեռ ընթանում էր, վարչապետի ընտանիքին պատկանող լրատվամիջոցն արդեն հրապարակեց կալանքը երկարաձգելու մասին «վճիռը»: Այսօր դատարանը պաշտոնապես հաստատեց այդ կանխորոշված դատավճիռը՝ երկարաձգելով կալանքը եւս երկու ամսով»: Ի դեպ, միայն այս փաստը բավական է, որ հետագայում ՄԻԵԴ-ը Հայաստանի դեմ որոշում կայացնի: Մենք անցյալում մի առիթով գրել ենք, որ ժամանակին Փաշինյանը երբ որեւէ պաշտոնյայի էր ազատում կամ նշանակում, կամ՝ կալանավորում էին որեւէ անձի, հրահանգում էր տեղեկատվությունն առաջինը ՀԺ-ին տրամադրել: Նա ոչ միայն ՀՀ ողջ «կառավարությունն է», այլեւ երկրի թիվ 1 նյուզմեյքերը:

Վաղարշապատում տեղի ունեցած ընտրություններից հետո ՏԿԵ նախարար Դավիթ Խուդաթյանը, որը ղեկավարում էր նախընտրական շտաբը եւ նշանակված էր որպես թիվ մեկ պատասխանատու, ըստ որոշ լուրերի, պաշտոնի առաջխաղացման ակնկալիքներ ունի: Նա իրեն մերձ շրջապատում խոսել է փոխվարչապետի պաշտոն զբաղեցնելու իր հավակնությունների մասին: Սակայն ՔՊ-ում կարծում են, որ համապետական ընտրություններից առաջ Խուդաթյանին իր պաշտոնից հեռացնելը մեծագույն սխալ կլինի, քանի որ նա ի պաշտոնե ղեկավարում է ՏԻՄ-երը, մարզպետներին եւ գլխավոր «ձայն բերողն» է համարվում: Պատահական չէ, որ համապետական ընտրությունների՝ արդեն իսկ ձեւավորված շտաբում Խուդաթյանին ՏԻՄ-երի պատասխանատու են նշանակել: Խորհրդարանական ընտրությունները հորով-մորով անելուց հետո նոր Խուդաթյանը կարող է ստանալ իր վարձը՝ նշանակվելով փոխվարչապետի պաշտոնում:

## Պարտությունը՝ հաղթանակ

Պետք չէ զարմանալ այն անզուսպ հրճվանքից, որն ապրում է իշխանությունը Վաղարշապատի ընտրությունների արդյունքների կապակցությամբ: Եվ պետք չէ ջանք գործադրել՝ նրանց բացատրելու, որ իրականում դա պարտությանը շատ նման հաղթանակ է, եւ առնվազն անիմաստ է նրանց այդ բուռն ոգեւորությունը: Մարդիկ, որոնք պատերազմում պարտությունը հաղթանակ են համարում, որոնք ասում են՝ «Արցախը կորցրինք, բայց Հայաստանը գտանք», Տիգրանաշենի եւ մյուս տարածքների հանձնումը փորձում են որպես «Արծվաշենի վերադարձ» ներկայացնել, իսկ ալիեւյան ստորացուցիչ համաձայնագիրը՝ կայուն խաղաղության երաշխիք, բացառված է, որ հասկանան ձեր ասածները: Մի իշխանություն, որը 7-ամյա բոլոր կորուստները փորձում է որպես ձեռքբերումներ ներկայացնել, որն Ալիեւի հոխորտանքը՝ «Արեւմտյան Ադրբեջանի» թեմայով, Սեւանը Գյոյչա կոչելը, 300 հազար ադրբեջանցու Հայաստան ուղարկելն առաջարկում է անտեսել, որովհետեւ դա «ներքին լսարանին ուղղված հայտարարություններ են», չի կարող ադեկվատ արձագանքել ոչ մի ուրիշ իրողության: Մի իշխանություն, որը փչացած ցորենի ներկրումը որպես դարակազմիկ իրադարձություն է ներկայացնում, եւ երբ պարզվում է, որ իրականում անասնակեր է ներկրել, անմիջապես «կռուտիտի» ձեւը գտնում է, թե անասունը, հավն ու խոզն էլ կենդանի են՝ ուտել են ուզում, չի կարող մյուս հարցերում ավելի ազնիվ ու խելացի լինել: Թե ինչ է տալիս այս իշխանություններին մի լոկալ համայնքում իշխանություն վերցնելը, պարզ չէ: Մանավանդ՝ երբ ողջ երկրում արդեն 8 տարի իշխանությունն իրենցն է, եւ, ինչպես ասում են, վաղուց ակնհայտ է, որ այդ ծանրաձողը գցել են իրենց «ոտքին», ու բոլորը համոզվել են, որ նրանք ունակ չեն պետություն կառավարելու: Բայց մի բանում հաջողել են՝ համառ են ու շատ են ուզում էլի մնալ:

*ՔՊ-ում պաշտոնակռիվը սկսված է, ՔՊ առանցքային ներկայացուցիչների հիմնական բանուգործը ներկուսակցական քարոզչությունն է, որ առաջիկայում սպասվող համաժողովի ժամանակ շարքային պատվիրակներից ձայն ստանան, ցուցակում բարձր տեղ զբաղեցնեն, հետեւաբար՝ նաեւ կարողանան հավակնել բարձր պաշտոնների: Նախօրեին սոցապնախարար Արսեն Թորոսյանն էր Սյունիք այցելել, մարզկենտրոն Կապանում կուսակցական հավաք էր կազմակերպել, հավաքը երեկոյան 7-ին էր: Նախարարը Սյունիք էր մեկնել ավելի վաղ՝ աշխատանքային ժամերին, բայց իր ֆեյսբուքյան էջում նախարարության ենթակայությամբ գործող որեւէ հիմնարկ այցելության վերաբերյալ ինֆորմացիա չտեղադրվեց, ինչպես սովորաբար անում է: Երեկ առավոտյան մի կարճ հոլովակ հայտնվեց Թորոսյանի ՖԲ էջում, որն արել էր Վայոց Ձորի Արենի համայնքում: Տեսանյութում նախարարն ասում է, թե Սյունիքից վերադառնալիս որոշել է կանգնել եւ ցույց տալ 16 մլն-անոց տների կառուցման իրենց ծրագրի ընթացքը: Ավելի վաղ գրել էինք, որ Ալեն Սիմոնյանն էր Սյունիք գնացել, ՔՊ-ական մի խումբ պատգամավորներ էլ Տավուշ էին այցելել: Ի դեպ, առաջիկա ընտրություններին ընդառաջ, հատկապես անհանգիստ է Ալեն Սիմոնյանը, որի դիրքերը խարխլվել են. Ռուբեն Ռուբինյանն ավելի լավ է «քլնգում» Փաշինյանի ընդդիմախոսներին, եւ քանի որ Փաշինյանի մոտ առաջ գնալու միակ պայմանը դա է, նրա շանսերն այսօր ավելի բարձր են գնահատվում:*

## ՀԵՏԵՎՈՒՄ ԵՆ ՄԱՄՈՒԼԻ ԴԵՄ ՌԵՊՐԵՍԻԱՆԵՐԻՆ

Եվրոպական կառույցները եւ միջազգային իրավապաշտպան կազմակերպությունները թեեւ չեն արձագանքում, հայտարարություններ չեն տարածում, բայց ուշադիր հետեւում են Հայաստանում խոսքի ազատության դեմ ոտնձգություններին: Այդ շարքում են դիտարկվում եւ «Առավոտ» օրաթերթին իր տարածքից հանելը, եւ Ժուռնալիստների միության դեմ հարձակումները, եւ Նիկոլ Փաշինյանի հայցն ընդդեմ «Հրապարակի», եւ «Իմնեմնիմի» փոդքաստը վարողներ Նարեկ Սամսոնյանի ու Վազգեն Սաղաթելյանի, անգամ Սամվել Կարապետյանի եւ Միքայել Աջապահյանի կալանավորումները:

ՃԱՆԱՊԱՐՀ

# ՂԱԶԱԽԱԿԱՆ ՑՈՐԵՆԻ ԱՌԱՔՄԱՆ ԱԿՈՒՆՔՈՒՄ ԿԱՆԳՆԱԾ Է ԻԼՀԱՄ ԱԼԻԵՎԸ

Ղազախստանից ֆուրաժային, ծլած եւ միկո-ալֆա տոքսիններով վարակված ցորենի՝ Հայաստան ներկրելը, որ Նիկոլ Փաշինյանն ու իր թիմակիցները սկզբում փորձում էին որպես ձեռքբերում եւ հաղթանակ ներկայացնել, իբր նոր լոգիստիկ ճանապարհին են բացել, շատ արագ եւ բոլորովին հակառակ էֆեկտն ունեցավ Հայաստանում: Մամուլի շնորհիվ 30.10.2025-ին բացահայտվեց (https://hraparak.am/post/659b47e3edf2ec91494c6c1b2b7eba2d), որ Հայաստան է գալիս ոչ թե պարենային ցորեն, այլ՝ ցածրակարգ, ծլած, միկո եւ ալֆա տոքսիններով վարակված, մարդու առողջության եւ կյանքի համար վտանգավոր, հավանաբար՝ կերարտադրության մեջ օգտագործման ենթակա ցորեն:

Այն բանից հետո, երբ ներկրվող ցածրակարգ ցորենի հավանական վարակվածության եւ վտանգավորության մասին տեղեկությունները փոխանցեցինք ՀՀ վարչապետի աշխատակազմ (https://hraparak.am/post/e6ac0510cfece4b04aaa20bd5eb30c4f), Փաշինյանի եւ իր կառավարության կողմից 4.11.2025-ին ասպարեզ նետվեց նոր ձեռնածություն, թե իբր ցորենի ներկրողն իշխանությունը չէ, այլ՝ մասնավոր ընկերություն: Ի պատասխան մասնավոր ներկրողի մասին գեներացվող սնամեջ քարոզչության 7.11.2025-ին «Փաշինյանը հրաժարվում է III կարգի եւ վարակված ցորենի պատասխանատվությունից» հոդվածում (https://hraparak.am/post/ef876aa7f36481f0cd96a027fa13f9df) առանց անուններ նշելու հրապարակեցինք SGS-ի ղազախստանյան լաբորատորիայի ղեկավարի մեկնաբանությունն այն մասին, թե ինչ մեխանիզմով եւ ինչպես են Ղազախստանում, դիտավորյալ սխալ նմուշառմամբ, կեղծում ցորենի լաբորատոր փորձաքննությունների արդյունքները: Այդ աղմուկի պատճառով Ղազախստանի գյուղատնտեսության նախարարությունը, սեփական լաբորատորիաների վարկը հարվածի տակ չդնելու համար, նախընտրեց բացահայտել ճշմարտությունը եւ 10.11.2025-ին պաշտոնապես հայտարարեց, որ Հայաստան է առաքվել IV կարգի ֆուրաժային ցորեն (IV կարգն օգտագործվում է միայն կերարտադրության մեջ):

Սակայն դա ամբողջը չէր: Աստանայից նաեւ բացահայտեցին, թե ինչպես է պատահել, որ այդ ցորենն առհասարակ առաքվել է Հայաստան:

«Ղազախստանի Հացահատիկի ազգային օպերատորը (Продкорпорация) Հայաստանի Հանրապետություն է ուղարկել պարենային ցորենի առաջին խմբաքանակը: 30 տարվա ընթացքում առաջին անգամ է նման մատակարարում հնարավոր դարձել: Այս տեղեկատվությունը երեկ հրապարակել է Продкорпорация-ն: Հաղորդվում է, որ Ղազախստանի եւ Ադրբեջանի ղեկավարների միջեւ ձեռք բերված պայմանավորվածությունների շնորհիվ կրկին հասանելի է դարձել Հայաստանի շուկան:

«Երեւանի ուղղությամբ բեռնափոխադրումների բոլոր սահմանափակումների վերացման մասին հայտարարվել է երկու նախագահների՝ Կասիմ-Ժոմարտ Տոկաեւի եւ Իլհամ Ալիեւի հանդիպման ժամանակ, որը տեղի է ունեցել 2025 թվականի հոկտեմբերի 21-ին՝ Աստանայում: Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ խաղաղության համաձայնություններն ամրապնդելու համար Ղազախստանը նոր երկաթուղային երթուղով առաքել է պարենային հացահատիկի փորձնական խմբաքանակ»,- հստակեցրել են Продкорпорация-ում:

...Բաքու կատարած աշխատանքային այցի ընթացքում Продкорпорация-ի ղեկավարությունը հանդիպել է Ադրբեջանում Ղազախստանի դեսպանատան ներկայացուցիչների հետ: Կողմերը համատեղ վերահսկում են ուղեբեռի տարանցումը եւ դրա առաքումը հայ գործընկերներին: ...«Ադրբեջանով անցնող ճանապարհը երկար տարիներ փակ էր: Հիմա սա քաղաքական քայլ է. բացվել է տարանցիկ ճանապարհը, եւ Ղազախստանը հացահատիկի փորձնական խմբաքանակ է ուղարկել՝ ի նշանավորումն խաղաղության համաձայնությունների»,- հայտնել են Продкорпорация-ում» (https://apk-news.kz/export/item-6071):

Այժմ՝ հարց. հայաստանյան որեւէ մասնավոր ընկերություն որտեղից կարող էր տեղյակ լինել, թե ինչ են պայմանավորվելու Ղազախստանի եւ Ադրբեջանի նախագահները, որ Ղազախստանից ցորեն գներ՝ Տոկաեւ-Ալիեւ պայմանավորվածության արդյունքում այն Հայաստան տեղափոխելու հաշվարկով: Իսկ եթե Տոկաեւն ու Ալիեւը չպայմանավորվեին, երկաթուղային երթուղի չգործեր, գնված ցորենն ինչ էր արվելու: Եվ երկրորդ. այդ ո՞ր օրվանից է Ղազախստանի գյուղնախարարությունը կամ Продкорпорация-ն, որի 100% բաժնետերը նույն գյուղնախարարությունն է, առեւտրային գործարքների մեջ ներգրավում մասնավոր ընկերությունների հետ: Աստանան միանշանակ բացահայտել եւ հայտարարել է, որ Հայաստանին IV կարգի ֆուրաժային ցորենի մատակարարը եղել է Ղազախստանի գյուղնախարարության Продкорпорация-ն, այդքանով էլ բացառվում է, որ գործարքի մյուս կողմը եղած լինի լոկ մասնավոր ընկերություն, առանց ՀՀ իշխանությունների ներգրավվածության:

Աստանայից «ձեռքի հետ» նաեւ բացահայտել են, որ Հայաստան ֆուրաժային ցորեն առաքելու ակունքում կանգնած է Իլհամ Ալիեւը, որը պայմանավորվել է Ղազախստանի նախագահի հետ: Փաշինյանին էլ այնպես են արհամարհել, հրապարակավ նվաստացրել, որ հարկ չեն համարել ո՛չ հետը խորհրդակցել, ո՛չ էլ գոնե անունը նշել: Թե ուրիշ էլ ինչ են պայմանավորվել Ղազախստանի եւ Ադրբեջանի նախագահները ցորենի հարցով, որ անուղղակիորեն առնչվում է Հայաստանին, ավելի ուշ կհրապարակենք:

### ՍԱՊԾ-ԻՑ ԹՈՂ ՀՐԱՊԱՐԱԿԵՆ

Քանի որ ՍԱՊԾ (Սննդի անվտանգության պետական ծառայություն) կոչված կառույցից անցյալ շաբաթավերջին դատարկախոսել էին, թե իբր իրենք Ղազախստանից առաքված ցորենի փորձաքննություն են կատարել եւ պարզել են, որ դա III կարգի ցորեն է, երկու տողով անդրադառնանք նաեւ այդ անմեղսունակ հայտարարությանը: ՍԱՊԾ-ից, փաստորեն, ասում են, թե Ղազախստանից առաքված IV կարգի ցորենը մինչեւ Հայաստան է հասել, դարձել է III կարգ... O-la-la, պետք է ենթադրել՝ ցորենի տեղափոխողն էլ եղել է Դեյվիդ Կոպերֆիլդը կամ Ռոպերթ Օպենհայմերը, կամ ինքը՝ Դոկտոր Ֆաուստը, որ նման գերբնական կախարդանքի ու փոխակերպման են հասել:

Իսկ եթե հեգնանքը թողնենք, ապա, որպեսզի յուրաքանչյուր ընթերցող էլ պատկերացնի, թե III կարգի ցորենի մասին ՍԱՊԾ դատարկախոսությունն ինչ կարգի անմեղսունակ հայտարարություն է, առաջիկայում կհրապարակենք Փորձաքննությունների, փորձարկումների եւ հավաստագրման ոլորտում երկրագնդի ամենահին, ամենահեղինակավոր եւ ամենահզոր ընկերության Société Générale de Surveillance (SGS)-ի ղազախստանյան կառույցի (SGS Kazakhstan LTD) լաբորատորիայի ղեկավար՝ կենսաբանական գիտությունների դոկտոր Օ. Վ. Ֆուրսովի մեկնաբանությունն այն մասին, թե ինչքան է վատթարանում ցածրակարգ ցորենի որակը օրեր տեւող տրանսպորտային փոխադրման արդյունքում, այն էլ՝ տաք եղանակին: Դա՝ մի քանի օր հետո:

Ներկա պահին եթե ՍԱՊԾ-ում իրապես կատարել են որեւէ հետազոտություն, ապա, խնդրեմ, թող առաջիկա օրերին (մինչեւ 24.11.2025թ.) պաշտոնական մամլո հաղորդագրությամբ հասարակությանը հայտնեն, թե որքան է եղել ծլած ցորենի պարունակությունը ներմուծված ղազախական ցորենի խմբաքանակում: Սա ամենակարեւոր տվյալն է, որը պատկերացում կտա ցորենի որակի մասին: Այնուհետ թող հայտնեն, թե ինչ ստանդարտի համապատասխանող լաբորատորիայում, սարքավորումներով եւ մասնագետների կողմից է իրենց փորձաքննությունը կատարվել՝ դիցուք, ISO 17025, ISO 9001, թե՞ մեկ այլ, Ղազախստանից ներմուծված ցորենը ո՞ր մեթոդով են փորձաքննության ենթարկել՝ ELISA (Enzyme-Linked Immnumosorbent Assay), թե՞ LC-MS/MS կամ էլ՝ այլ:

Վերջապես՝ ՍԱՊԾ-ից թող հրապարակեն փորձաքննության կոնկրետ պարամետրեր՝ aflatoxin B1, deoxynivalenol (DON), fumonisin, ochratoxin, zearalenone (ZEN), trichothecene (T-2 toxin) տոքսինների պարունակության տվյալները նմուշառված խմբաքանակում:

Եթե այս օբյեկտիվ տվյալները չհրապարակվեն, ապա ամեն հիմք կստեղծվի՝ ՀՀ գլխավոր դատախազություն հաղորդում ներկայացնելու ՀՀ Քրեական օրենսգրքի 41-րդ «Բնակչության առողջության դեմ ուղղված այլ հանցագործություններ» գլխի առնվազն երկու հոդվածով նախատեսված առերեւույթ հանցագործության մասին, որում հրապարակավ ներգրավված են ՀՀ էկոնոմիկայի խեղկատակ նախարարը եւ ՍԱՊԾ կոչված կառույցի ներկայացուցիչները: Եւ դա մենք կանենք:

### ՀԵՏԳՐՈՒԹՅՈՒՆ

Այս հոդվածը հիմնականում գրված էր, երբ երկու տեղեկություն ստացանք: Առաջին՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը պատասխանեց 3.11.2025-ին ՀՀ վարչապետի աշխատակազմին հանձնված իմ հարցմանը եւ կից փաստաթղթերին: Գրագետ պատասխան էր՝ շնորհակալություն, սակայն այն որեւէ օբյեկտիվ, թվային, տոկոսային տեղեկություն չի պարունակում: Այդքանով էլ՝ էկոնոմախի պատասխանը կայքում հրապարակում ենք, սակայն ՍԱՊԾ-ին ուղղված մեր հարցադրումները չեն փոխվում, մնում են ուժի մեջ: Երկրորդ. երեկ Ղազախստանից տարածվեց նոր տեղեկություն, որով Աստանայից բացահայտել են, որ ոչ միայն ֆուրաժային IV կարգի ցորեն են առաքել Հայաստան, այլեւ արհեստականորեն, քիմիական հավելանյութերով բարելավել են առաքված ցորենի որակական ցուցանիշները (չշփոթել որակական հատկանիշների հետ) անկման թիվը կազմել է 235-334 վրկ, սպիտակուցի պարունակությունը 12,8%, սնձանինը՝ (клейковина) 20%, ինչի արդյունքում էլ հայաստանյան լաբորատորիային IV կարգի ցորենը թվացել է III կարգի: Սա էլ՝ մի նոր սկանդալ, որին առաջիկայում կանդրադառնանք:

Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ
lusine@hraparak.am

ՀԱ
ԷԿՈ
010, ք.Երեւան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07. Ֆաքս 52-65-77
էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

Հարգելի տիկին Պետրոսյան,
ՀՀ վարչապետի աշխատակ
արցման կապակցությամբ հայտ
ուրաքանչյուր վագոն ուղեկցվել է
ողմից տրամադրված որակի փորձ
Ցորենը Հայաստան ներմուծ
արմնի կողմից Ղազախստանի Հա
մուշները ներկայացվել են «Հ
ուսասանիտարական լաբորատոր
որձաքննության:

# ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԳՆԵՐԻ ԹՌԻՉՔԱՅԻՆ ԵՎ ԱՄԵՆՕՐՅԱ ԱՃ Է ԳՐԱՆՑՎՈՒՄ

Երեւանի մթերային խանութներում վերջին օրերին նկատվում է սննդամթերքի գների թռիչքային եւ ամենօրյա աճ: Հատկապես թռչում է մսեղենի գինը: Նախորդ օրը հավի մսի 1 կիլոգրամն արժեր միջինը 1100-1150 դրամ, իսկ նոյեմբերի 18-ին այն արդեն տատանվում էր 1250-1350 դրամի սահմաններում: Թանկանում է ձուն՝ միջինը 70 դրամից հասնելով 80-85 դրամի, ինչպես նաեւ՝ կարագը, պանիրը, բանջարեղենը: Վիճակագրության կոմիտեի տվյալներով, սննդամթերքի եւ ոչ ալկոհոլային խմիչքների գները 2025 թվականի հոկտեմբերին, անցյալ տարվա համեմատ, աճել են 5,6 տոկոսով: Տավարի մսի գինը մեկ տարում աճել է 3,1 տոկոսով, ոչխարի միսը թանկացել է 4,9, իսկ խոզի միսը՝ 9,4 տոկոսով: «Երեւան սիթի» խանութների ցանցում խոզի մսի 1 կիլոգրամն այս օրերին արժե 4000-4600 դրամ: Իսկ մարդկանց եկամուտները մի դրամով չեն ավելանում:

## Նիկոլ Փաշինյանի բացթողումը

Նոյեմբերի 18-ին Իջեւան համայնքի Աճարկուտ գյուղում կայացել է Գեւորգ Հարությունյանի ընտանիքին պատկանող ռեստորանահյուրանոցային համալիրի բացումը: Աճարկուտը Կիրանցի կողքին գտնվող փոքրիկ գյուղ է: Գեւորգ Հարությունյանը Ռուսաստանում գործարարությամբ է զբաղվում: Տավուշի մարզային հեռուստաընկերությանը տված հարցազրույցում նա հայտնել է, որ ինքը, որպես աճարկուտցի, գյուղում ռեստորանահյուրանոցային համալիր է հիմնել, քանի որ «գյուղը հատնում, պրծնում, վերանում էր»: Իրականում, Աճարկուտի հատնելու, վերանալու խնդիր չկա ու երբեք չի եղել, գյուղը միշտ փոքր, սակայն կայուն թվով բնակչություն է ունեցել: Գ. Հարությունյանն այդ համալիրը սկսել է կառուցել 2019 թվականին, ավարտել է 2025-ին: Ռեստորանահյուրանոցային համալիրի բացումը կատարել, օբյեկտի կարմիր ժապավենը կտրել է հենց Գեւորգ Հարությունյանը: Զարմանալի է, որ հանդիսավոր բացմանը ոչ մի պաշտոնյա չի մասնակցել: Դա երեւի Նիկոլ Փաշինյանի բացթողումն է, որը նման դեպքերում ներկա լինելով՝ առիթը բաց չի թողնում հայտարարելու, թե թավշյա հեղափոխությունից հետո Հայաստանում ներդրումային միջավայրը բարելավվել է՝ դրսից եկել, Հայաստանում բիզնես են հիմնել: Հավանական է, որ նա իր բացթողումն առաջիկայում կշտկի կամ էլ ֆեյսբուքյան գրառումով կամ լայվով կանդրադառնա Աճարկուտի համալիրին:

**Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ**

ԼԻՑԵՆԶԻԱ

# ՀԱԿԱՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐՈՎ ՀԷՑ-ՈՒՄ «ՍՏԱՏՈՒՍ ՔՎՈՆ» ԿՊԱՀԵՆ

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերության լիցենզիայի դադարեցման որոշումից հետո Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովից հայտարարություն տարածեցին, թե, անկախ ՀԾԿՀ որոշումից, «Տաշիր գրուպ» ընկերությունը պետք է շարունակի կատարել իր բոլոր ֆինանսական եւ մյուս պարտավորությունները. «Հաշվի առնելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետագա գործունեության կայունությանն առնչվող՝ հանրության շրջանում առկա մտահոգությունները, հայտնում ենք, որ, համաձայն օրենսդրության, ընկերությունն էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիայի գործողության դադարեցումից հետո եւս պարտավոր է կատարել օրենսդրությամբ նախատեսված իր բոլոր, այդ թվում՝ ֆինանսական պարտավորությունները»:

ՀԾԿՀ հաղորդագրության մեջ հղում է արվում այն օրենսդրությանը՝ օրենքների փաթեթին, որն իշխող մեծամասնությունը հրատապության ռեժիմով ամռանն ընդունեց խորհրդարանում: Այդ փաթեթի ընդունումը օրենքով նախատեսված ժամանակավոր կառավարչի ինստիտուտը, քանի դեռ վարույթի ամբողջական քննությունը չի ավարտվել: Սակայն այս իշխանությունը որոշեց, որ կարող է չկատարել միջազգային արբիտրաժի որոշումը:

Բայց այս պատմության մեջ ամենաուշագրավն այն է, որ դեռեւս հայտնի չէ, թե ընկերությունը որքան ժամանակ է շարունակելու իրականացնել բոլոր պարտավորությունները, այդ թվում՝ ժամանակավոր կառավարչին սեփական միջոցներից 5.2 միլիոն դրամ աշխատավարձ տալը: Լիցենզիայից զրկելուց հետո կառավարությունն ու Կարապետյանները բանակցությունների համար, օրենքով, երեք ամիս ժամանակ ունեն: Այս ընթացքում կողմերը կարող են պայմանավորվել ընկերության վաճառքի շուրջ կամ համաձայնության չգալ: Ղազինյանը շարունակում է պնդել, որ կառավարությունը չունի ռեսուրսներ՝ ՀԷՑ-ը գնելու. «Մի առիթով ասել եմ եւ կրկնում եմ՝ բյուջեն չունի նման հնարավորություններ, որ կարողանան գնել, եթե, իհարկե, նոր վարկեր չվերցնեն»: Իսկ եթե համաձայնության չգան, գործադիրը կավոր բեռի վերաբերյալ հաշվարկներ դեռ չունեն, ավելին՝ առաջ են քաշում թեզը, որ լիցենզիայից զրկվելուց հետո ՀԷՑ-ի արժեքն էականորեն նվազելու է, գնահատելու են հաշվեկշռային արժեքով, այսինքն՝ միայն շենք-շինությունների, այլ գույքի արժեքով:

Սեփականատիրոջ ներկայացուցիչ Ղազինյանը ծիծաղելի է համարում այդ պնդումները. «Ճիշտն ասած, երեկ լսեցի կառավարչից նման պնդում, հիմա ի՞նչ է ստացվում,

հաջորդեց Սամվել Կարապետյանի ապօրինի կալանավորմանը, եւ անունը դրվեց «ՀԷՑ-ն ազգայնացնելու գործընթաց»:

ՀԷՑ նախկին գլխավոր տնօրեն **Դավիթ Ղազինյանն** ասում է, որ ՀԷՑ-ում, ըստ էության, ՔՊ ընդունած օրենքների հիման վրա պահպանվելու է ստատուս քվոն, եւ հիշեցնում է նաեւ, որ օրենսդրական այդ փաթեթի սահմանադրականությունը խորհրդարանական ընդդիմությունը վիճարկել է Սահմանադրական դատարանում: Նկատենք, որ ՔՊ-ին ենթակա բարձր դատարանն արհեստականորեն ձգձգում է այդ հայցի քննությունը: Միջազգային արբիտրաժային դատարանի որոշումը, ըստ էության, եւս դրան էր միտված՝ առաջարկում էին չեղարկել րող է գնալ ՀԷՑ-ը հանրային գերակա շահ ճանաչելու ճանապարհով, որն էլ առանց համապատասխան փոխհատուցման չի կարող իրականացվել: Այդ փոխհատուցումը կարող է մի քանի հարյուր միլիոն դոլարի հասնել: Անկախ աուդիտորական եզրակացությամբ, անցած տարեվերջին ՀԷՑ-ի սեփական կապիտալը մոտ 360 միլիոն դոլար է գնահատվել, չհաշված մի քանի հարյուր միլիոնի հասնող պարտավորությունները: Ղազինյանը հիշեցնում է նաեւ, որ «Հանրային գերակա շահի մասին» ՀՀ օրենքով իրենք կարող են անկախ աուդիտորական կազմակերպության գնահատած արժեքի եւս 15 տոկոսի պահանջ ներկայացնել: Այդուհանդերձ, իշխանական պաշտոնյաները պնդում են, որ ՀԷՑ-ի ֆինանսական հնարաեթե դա պետք է գնի փոփոխություն բերի... այսինքն, միտումնավոր լիցենզիայից զրկել են, որ արժեքը նվազեցնեն, ուրեմն սա էլ իր հերթին լրիվ ուրիշ հանցակազմ է պարունակում: Գիտեք՝ գուցե իրենց թվում է, որ այս վեճերը երկարաժամկետ են, բայց, ի վերջո, դրանք ավարտվելու են, եւ լինելու են որոշումներ, ու վստահ եմ՝ մեր օգտին»: Սակայն ցավն այն է, որ ի վնաս Հայաստանի որոշումներից անձամբ իրենք չեն տուժելու, այլ՝ պետական բյուջեն:

Նաեւ հանրային շահի ճանաչելու գործընթացի համար հստակ ժամկետներ չեն սահմանվում, եւ վտանգ կա, որ իշխանությունն անվերջ կարող է ձգել այս վիճակը: Ղազինյանն ասում է. «Երեկ հայտարարում էին՝ ինչքան ուզենք»:



**Նյութերը՝ Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆԻ**

# ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱՐԱՐԸ ՀՌՀ ԱՆԴԱ՞Մ Է, ԹԵ՞ ՔՊ-Ի

«Հայաստան» դաշինքը պահանջում է դադարեցնել Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի անդամ Հակոբ Հակոբյանի լիազորությունները: ՀՌՀ անդամ Հակոբ Հակոբյանը, նույն ինքը՝ մշակույթի նախկին նախարար Հակոբ Մովսեսը, ըստ ընդդիմադիր պատգամավորների, խախտել է ՀՌՀ անդամի կարգավիճակից բխող քաղաքական չեզոքությունն ու զսպվածությունը, ինչը Սահմանադրությամբ է նշված: Դաշինքը նրան ՀՌՀ անդամի լիազորություններից զրկելու նախագիծ է շրջանառել՝ ներկայացնելով իր պահանջի հիմնավորումները: Ըստ այդմ՝ Հակոբ Մովսեսն Առաջին լրատվականին տված հարցազրույցում Հայ հեղափոխական դաշնակցությանը վիրավորող ու վարկաբեկող մի շարք արտահայտություններ է թույլ տվել, ինչպես նախագծում է նշվում՝ «ՀՅԴ-ի նկատմամբ քարոզել է ակնհայտ ատելություն»: Հակոբ Մովսեսին պաշտոնազրկելու առաջարկի տեքստում մատնանշված են ՀՀ Սահմանադրության 197-րդ հոդվածի 5-րդ եւ 6-րդ մասերը. «ՀՌՀ անդամներն իրենց լիազորությունների իրականացման ժամանակահատվածում չեն կարող լինել որեւէ կուսակցության անդամ կամ որեւէ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Հրապարակային ելույթներում պետք է ցուցաբերեն քաղաքական զսպվածություն: Պայմաններից որեւէ մեկը խախտելու դեպքում ՀՌՀ անդամի լիազորությունները դադարեցնում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով»:

Հակոբ Մովսեսն այդ պաշտոնում ընտրվել է ԱԺ-ի կողմից՝ 2022 թվականի հունվարի 22-ին: Նա մշտապես պրոիշխանական հարցազրույցներ է տվել եւ լուտանքներ տեղացել ընդդիմության հասցեին, իսկ նշված հարցազրույցում, հեղինակների վկայաբերմամբ, արտաբերել է մտքեր, որոնցում արտահայտվում է ակնհայտ քաղաքական վերաբերմունք ՀՅԴ-ի նկատմամբ, եւ հնչեցնում է անհիմն մեղադրանքներ, ինչպիսիք են. «Մեր պատմական դժվարությունների մեջ Դաշնակցության մեղքը շատ մեծ է», «Դաշնակցության գաղափարախոսությունը շատ վտանգավոր է հայ ժողովրդի համար» եւ այլն: «Սրանք ակնհայտ քաղաքական գնահատականներ են, որոնք նաեւ ատելություն են քարոզում Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության նկատմամբ»,- ընդգծված է նախագծում: Հիշեցնում են նաեւ, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը դեռեւս 2024 թվականին հստակ սահմանում է տվել հանրային որոշ ծառայողների, այդ թվում՝ ՀՌՀ անդամների վերաբերյալ. օրենսդրությամբ զսպվածության պարտավորություն ունեցող՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձը «պարտավոր է զերծ մնալ քաղաքական բնույթի ելույթներ ունենալուց, քաղաքական կողմնորոշում ունեցող հոդվածներ հրապարակելուց կամ սոցիալական մեդիայում ունեցած օգտահաշվից քաղաքական որեւէ կուսակցության օգտին կամ դրա դեմ գրառումներ կատարելուց, նմանատիպ գրառումներ հավանելուց կամ տարածելուց»: ԿԿՀ-ն իր 04/2025/Վ/Վ եզրակացությամբ արձանագրել է, որ «քաղաքական կուսակցության ուղղակի անվանակոչմամբ դրա

գործունեությունը կամ գաղափարախոսությունը քննադատող հրապարակային խոսքը ելույթին հաղորդում է քաղաքական բնույթ»: Երեկ մեզ չհաջողվեց կապ հաստատել ո՛չ Հակոբ Մովսեսի, ո՛չ էլ ՀՌՀ նախագահ Տիգրան Հակոբյանի հետ, ովքեր, չնայած ձեւով անկախ հանձնաժողովի անդամներ են, սակայն իրականում իշխանության մաս են կազմում եւ իրենց գործունեությամբ ծառայում են ՔՊ-ի շահերին:

# ՔՊ-Ն ՍՈՎՈՐԱԿԱՆ, ՇԱՐՔԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԷՐ՝ ՄԻՆՉԵՎ ԵՎՐԱՔՎԵՆ

*«Հրապարակի» զրուցակիցը Գերագույն խորհրդի նախկին պատգամավոր **Ազատ Արշակյանն** է:*

**- Եկեք զրույցը սկսենք նրանից, թե ինչու են Հայաստանում արեւմտամետ դիրքորոշում ունեցող ուժերն իրար ետեւից ձախողումներ արձանագրում: Գուցե իսկապես՝ այլեւս մեր հասարակությունն Արեւմուտքի հետ հույսեր չի կապում: Գուցե կրկին ռուսամետությունն է մեզանում գլուխ բարձրացնում: Վերջին երկու ՏԻՄ ընտրությունների ժամանակ Արեւմուտք ձգտող ուժերը չկարողացան անգամ անցողիկը հաղթահարել:**

- Նախընտրական կամպանիայի ոչ ճիշտ կազմակերպման հետեւանք էր: Մենք ճիշտ չէինք կազմակերպել: Գյուղական համայնքային հեղինակությունները շատ մեծ դեր կատարեցին, իսկ արեւմտամետ ուժերի մասին եթե խոսում ենք, ապա պետք է նշենք, որ հաղթող թեկնածուն Վաղարշապատում՝ Արգիշտի Մեխակյանը նույնպես արեւմտամետ ուժ էր:

**- Իրո՞ք՝ նա երբեւէ խոսել է այդ մասին:**

- Նա ավելի շատ աշխատում էր համայնքային խնդիրների շուրջ: Կամպանիան տանում էր տեղական ինքնակառավարման խնդիրների ուղղությամբ, իսկ, այ, օրինակ, Հարություն Մկրտչյանը ներկայացնում էր համապետական ծրագրեր, այդ պատճառով էլ, հավանաբար, շատ ձայներ չստացավ, իսկ ընդդիմության հաջողությունը պայմանավորված էր մեծ ռեսուրսներով: Նախկին իշխանություն, քրեաօլիգարխիկ ռեսուրսներ եւ այլն, ուստի կարողացան այդքան ձայն հավաքել: Ինձ համար շատ ցավալի էր, որ Հարություն Մկրտչյանը չհաղթահարեց անցողիկ շեմը: Նրա ներկայությունն ահագին աշխուժություն կմտցներ ավագանի: Իմ կարծիքով՝ ի վերջո հաղթել են արեւմտամետ ուժերը, Արգիշտին արեւմտամետ էր:

**- Շփվե՞լ եք անձամբ նրա հետ, թե՞ որպես ՔՊ-ական եք նրան արեւմտամետ համարում:**

- Նա պաշտպանում էր «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քաղաքական ծրագիրը, ինձ համար շատ կարեւոր՝ «Եվրաքվեն»՝ նույնպես: Մինչեւ «Եվրաքվեն» ես ոչ մի հետաքրքիր բան չեմ տեսել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ծրագրում: Սովորական, շարքային կուսակցություն էր, սակայն «Եվրաքվեի» ծրագրից հետո փոխվեց իմ տեսակետը: Նախքան այդ ես ՔՊ կուսակցությունում ոչ մի հետաքրքիր բան չէի նկատել: Եթե «Եվրաքվեն» հանում ես, այդ կուսակցությունը թուլանում է: Առանձնապես բան չի մնում տակը, սովորական հայաստանյան քաղաքական կազմակերպություն է:

**- Նոյեմբերի 18-ին Ազգային ժողովում նշեցիք, որ «Քաղաքացիական պայմանագիրը», մասնավորապես՝ Նիկոլ Փաշինյանը, ճիշտ ուղու վրա է: Հետաքրքիր է՝ ո՞ր ասպեկտով է ճիշտ ուղու վրա, ինչ նկատի ունեք:**

- Հենց այն, որ եվրաքվե է ձեւավորում, իր հետ բերում է իրավական բարեփոխումներ, տնտեսական բարեփոխումներ, հասարակական կյանքի նկատմամբ վերաբերմունք, եւ, առհասարակ, Եվրոպայի արժեքային համակարգը տեղափոխվում է Հայաստան:

**- Բայց Փաշինյանն ընդամենը մի քանի ամիս առաջ Շանհայ էր գնում, նրանից ինչ եվրոպամետ:**

- Դա ինձ համար անընդունելի էր: Օրենք են ընդունել, պետք է կատարեն: Պարտադիր է: Օգոստոսի 8-ի փաստաթղթով՝ Թրամփի ուղիով արեւմտականությունն ուժեղացվում է ՀՀ-ում: Ավելի ճիշտ՝ ինչ-որ իմաստով Հայաստանին նույնիսկ պարտադրում են ավելի լուրջ ու հետեւողականորեն գնալ դեպի ԵՄ:

**- Բոլորովին վերջերս Եվրախորհրդարանի պատգամավորներ էին եկել Հայաստան եւ նշում էին, որ Հայաստանում ժողովրդավարությունը շատ վատ վիճակում է, անթույլատրելի է մարդկանց խոսքի համար կալանավորելն ու ազատազրկելը: Ի՞նչ կասեք Դուք այս մասին:**

- Ինձ համար եւս անընդունելի է: Խոսքի համար չի կարելի որեւէ մեկին ենթարկել ճնշումների եւ դեռ մի բան էլ ազատությունից զրկել, բայց եթե խոսքի թիկունքում կա կազմակերպված սցենար, գործողություն, ինչպես նաեւ՝ նյութական պլանավորված գործ, ապա, այո, պետք է կալանավորել, բայց եթե նման քայլեր չեն արվել, անխոս, չի կարելի մարդկանց կալանավորել, դատապարտել: Խոսքի ազատությունը համաշխարհային արժեք է, որը պետք է հարգել: Կա մեկ նրբություն. ատելության քարոզն այլ բան է, նացիզմը եւ այլն:

**- Ինչ եք կարծում՝ որեւէ մեկը Նիկոլ Փաշինյանից ավելի շա՞տ է Հայաստանում ատելություն քարոզում:**

- Օրինակ՝ ժողովրդավարության դեմ կա ատելության քարոզ: Ժողովրդավարությունը թիրախավորված է. «Մենք, մեր ձեւով»: Ես, օրինակ, չեմ հասկանում, թե դա ինչ է նշանակում: Օրինակ, եթե Դուք ասեք՝ «մենք, մեր ձեւով», ես կհասկանամ, որ խոսքը մամուլի, խոսքի ազատության մասին է, բայց երբ դա ասում է նարկոմանը, ես հասկանում եմ, որ նա կարող է կայֆ բերել: Երբ նույն բանն ասի երաժիշտը, ես կհասկանամ, որ նոտաներ է բերելու: Այսպիսի հարցեր կան:

**- Օրինակ, երբ գործարարն ասում է, որ եկեղեցուն, եկեղեցականներին իր ձեւով կպաշտպանի իշխանական բացահայտ հալածանքներից, դա հանցա՞նք է:**

- Հոգեւորականների մասին ենք խոսում, որոնք խոսում են ռազմական հեղաշրջման մասին:

**- Ասելը քի՞չ է, չկա գործողություն:**

- Հոգեւորականը կոչ էր անում զինված ուժերին՝ զավթել իշխանությունը:

**- 2016 թվականին էլ «Սասնա ծռերը» գրոհեցին ՊՊԾ գունդը, անմեղ մարդկանց սպանեցին ու պատանդ վերցրին, սակայն Փաշինյանը նրանց աջակցում էր, արդարացնում էր:**

- Ես՝ ինքս, երբեք չեմ սատարել, չեմ պաշտպանել նրանց: Մենք այդ ժամանակ իրար հետ չէինք: Ես Փաշինյանի բոլոր ծրագրերին չէ, որ աջակցում եմ: Աջակցում եմ բացառապես եվրածրագրին: Այն նշանակում է անվտանգություն եւ զարգացում:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ԵԹԵ ՀՀ-Ն ՀՐԱԺԱՐՎԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԱՆԳԱՏՆԵՐԻՑ, ԲԱՔՎԻ ՊԱՏԱՆԴՆԵՐԸ ԿՄՆԱՆ ԱՆՊԱՇՏՊԱՆ

Ադրբեջանի գլխավոր դատախազը հայ պատանդների համար պահանջել է դատավճիռներ՝ 16 տարուց մինչեւ ցմահ ազատազրկում: Այն, ինչի համար նորմալ աշխարհում պետք է դատվեին Ադրբեջանի ֆաշիստական իշխանության ներկայացուցիչները, դատում են իրենց ազատության եւ անկախության համար պայքարած Արցախի ռազմաքաղաքական ղեկավարներին, որոնց Ալիեւը պատանդ է վերցրել՝ արցախցիների Հայաստան տեղափոխումը թույլատրելու համար:

«Հրապարակի» հետ զրույցում հայ գերիների շահերի ներկայացուցիչ, փաստաբան **Սիրանուշ Սահակյանն** ասաց, որ պատժաչափերն իր համար կանխատեսելի էին: «Ի սկզբանե հասկացել ենք, որ ռազմաքաղաքական ղեկավարության նկատմամբ ցմահ է պահանջվելու: Այն, որ Բակո Սահակյանի եւ Արկադի Ղուկասյանի առնչությամբ պահանջել են 20 տարի, դա ընդամենը օրենսդրական խոչընդոտի արդյունք է: Վերջիններիս 65 տարին լրացել է, ադրբեջանական օրենսդրությամբ 65 տարին լրացածները համարվում են տարեցներ, իսկ տարեցների կատարած հանցագործությունների դեպքում արգելվում է ցմահ ազատազրկման կիրառումը: Այս պարագայում ցմահ ազատազրկումը փոխարինվում է 20 տարի ազատազրկմամբ, բայց տարիքային առանձնահատկությունից ելնելով՝ դա փաստացի ցմահ ազատազրկում է: Սրանք դեռեւս առաջարկներ են, բայց քանի որ քաղաքական պատվերի հիման վրա գործող դատարաններ հետ գործ ունենք, կանխատեսելի է, որ դատարանները հաստատելու են այս պատժաչափերը»,- ասաց Սահակյանը: Բողոքարկելու հնարավորություն կմ: Սահակյանն ասաց, որ ձեւական առումով նման հնարավորություն կա, առնվազն մյուս ռազմագերիների գործերով կարող է ասել, որ հանրային պաշտպանները մի քանի ձեւական բողոքներ են գրել, դրանք չեն բավարարվել, եւ սահմանված պատժաչափերը մնացել են անփոփոխ: «Արարքը մեղմացնող կամ պատիժը մեղմացնող դատական ակտեր՝ վերադաս դատական ատյաններից, սպասելի չեն: Միակ հնարավորությունը միջազգային ատյաններն են: Եվրոպական դատարանն իրավասություն ունի արձանագրելու, որ հետապնդումը չունի իրավական եւ փաստական հիմքեր, պայմանավորված է եղել քաղաքական նպատակներով, ուստի քաղաքական հետապնդում է: Ազատությունից զրկելը դա դարձնում է ապօրինի, եւ Եվրոպական դատարանը լիարժեք իրավասու է քննել, թե ադրբեջանական դատարանները պատշաճ կերպով են կազմակերպել դատավարությունը, եւ բոլոր երաշխիքներից արդյոք կարողացել են օգտվել ամբաստանյալները: 23-ից 22-ի գործը միջպետական գանգատով է ներկայացված: Այստեղ Հայաստանի կառավարությունն անելիքներ ունի, սակայն եթե կառավարությունը խաղաղության համաձայնագրի հիման վրա հրաժարվի գանգատներից, այս անձինք կհայտնվեն իրավական առումով անպաշտպան վիճակում: Որպես փոխարինող միջոց՝ մենք աշխատում ենք ընտանիքների հետ, ընտանիքներն արդեն իսկ լիազորություններ են փոխանցում, որպեսզի անհատական գանգատներ ներկայացվեն: Եթե մենք չկարողանանք միջազգային ատյաններում ապալեգիտիմացնել այս դատավարական ակտերը, սա շատ վտանգավոր նախադեպ կդառնա. համանման արարքներ կատարած անձինք կարող են կրկին ենթարկվել քրեական պատասխանատվության: Չմոռանանք, որ մեղադրանքները ներառում են նաեւ ապօրինի սահման անցնելը, նման կարգավիճակում գտնվել են 150 հազար արցախցիներ՝ սա լուրջ սպառնալիք է յուրաքանչյուր արցախցու համար: Նրանք ցանկացած պահի, անգամ եթե հետվերադարձի իրավունքն իրացնեն, կարող են ենթարկվել քրեական պատասխանատվության հենց 15 գործով հաստատված դիրքորոշումների շնորհիվ: Դատական ակտերը եթե օրինական ուժ են ստանում, վերջնական են եւ չեն չեզոքացվում միջազգային ատյանների կողմից, ունենում են նախադեպային նշանակություն»,- շեշտեց Սահակյանը:

Հայկա ԱԼՈՅԱՆ

# ՓՈՐՁԱՐԿՈՒՄ ԵՆ ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՍՑԵՆԱՐԸ

Ադամ Սմիթ

Ադամ Սմիթ

Ադամ Սմիթ

ՄԵԿՆԱՐԿ

# «ՓԱՇԻՆՅԱՆԸ ԳՐԱՎԵՑ ԷՋՄԻԱԾԻՆԸ ԵՎ ՀԱՐՎԱԾ ՀԱՍՏՐԵՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆԸ». ԲԱՔՎՈՒՄ ՑՆԾՈՒԹՅՈՒՆ Է

«Հշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը հաղթանակ տարավ»,- ուրախությամբ «ավետում» է ադրբեջանցի քաղաքագետ Ֆարհադ Մամեդովը, որն իշխանական «խոսափող» է ու նաեւ վերջերս Հայաստանում էր՝ մասնակցում էր քաղհասարակության շրջանակներում փակ հանդիպմանը եւ արժանացել էր ծնունդով Արցախից Ախ քարտուղար Արմեն Գրիգորյանի ընդունելությանը: «Մոտ 70 հազար ընտրողներից ավելի քան 25 հազարը մասնակցեց քվեարկությանը: Քաղաքի ձայների համար մրցում էին երեք հիմնական ուժեր՝ «Քաղաքացիական պայմանագիրը», նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանի կողմից աջակցվող ընդդիմադիր «Հաղթանակ» դաշինքը եւ նախկին պատգամավոր Անդրանիկ Թեւանյանի գլխավորած «Մայր Հայաստան» կուսակցությունը: Այսպիսով, 2026 թվականի խորհրդարանական ընտրությունների նախօրեին այս արդյունքը «փոքր հաղթանակ» էր Նիկոլ Փաշինյանի համար, որը խոստանում էր ավելի մեծ նվաճում: Վաղարշապատում հաջողությունը խոսում է Փաշինյանի կուսակցության հաղթանակի հնարավորությունների մասին նաեւ համապետական ընտրություններում: Համաձայն Հայաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ քաղաքային խորհրդի 33 տեղերից 19-ը բաժին հասավ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը, 12-ը՝ «Հաղթանակ» դաշինքին, իսկ «Մայր Հայաստանը» ստացավ ընդամենը երկու մանդատ»,- գրում է մոլորյալը:

«Ընտրությունների ընթացքում թե՛ իշխող կուսակցության, թե՛ ընդդիմության դիտորդները պարբերաբար գրանցել են խախտումներ, այդ թվում՝ ընտրողների կազմակերպված տեղափոխում ընտրատեղամասեր, ընթացակարգային խախտումներ, անպատշաճ կազմված ընտրողների ցուցակներ եւ դրանցում մահացած քաղաքացիների անունների ներառում: Ընտրատեղամասերից մեկում ընդդիմության ներկայացուցիչը պնդել է, որ «Քաղաքացիական պայմանագրի» ներկայացուցիչը պահում է ընտրողների ցուցակ եւ պարբերաբար նշումներ է անում դրա վրա: «Քաղաքացիական պայմանագրի» ներկայացուցիչը կտրականապես հերքել է մեղադրանքները՝ պնդելով, որ իր մոտ եղած ձեւաթուղթն օգտագործվել է միայն ընտրատեղամաս ներկայացած քաղաքացիների թիվը գրանցելու համար, եւ որ հետագայում ոչնչացրել է այն»,- պաշտպանում է ադրբեջանցին Նիկոլին: «Այս բոլոր խախտումներից անկախ, ընդդիմությունը կասկածի տակ չի դնում ընտրությունների արդյունքները, քանի որ չեն գրանցվել լուրջ խարդախության դեպքեր, որոնք կարող էին էականորեն ազդել արդյունքի վրա (քվեաթերթիկների լցոնում, կեղծ քվեարկության արձանագրություններ, ոչ թափանցիկ ձայների հաշվարկ եւ այլն): Այս առումով բոլորն ընդունում են, որ Վաղարշապատում ընտրությունների արդյունքները, ընդհանուր առմամբ, արտացոլում են քաղաքի բնակիչների կամքը»,-եզրափակում է Նիկոլի համերկրացու սազանդարը:

«Հայաստանը բախվում է ներքին քաղաքական կարեւոր նորություններ, որոնք կարող են եւ, ամենայն հավանականությամբ, կլինեն կարեւորագույնը՝ տարածաշրջանում խաղաղության գործընթացի առաջխաղացման համար: Վաղարշապատի տեղական համայնքում տեղի ունեցան ավագանու ընտրություններ: Նիկոլ Փաշինյանի ՔՊ կուսակցությունը ստացավ ձայների 48%-ը, իսկ Դաշնակցությունը եւ նրանց մերձավոր դաշնակիցները երկրորդ տեղում են՝ 31%-ով: «Մայր Հայաստան» դաշինքը ստացավ ձայների 5%-ը: Արդյունքում, խորհրդի 33 տեղերը բաշխվեցին հետեւյալ կերպ. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը ստացավ 19 մանդատ, «Հաղթանակ» դաշինքը՝ 12 մանդատ, իսկ «Մայր Հայաստան»-ը՝ 2 մանդատ: Սա Նիկոլ Փաշինյանի կողմնակիցներին իրավունք է տալիս ձեւավորել «միակուսակցական» տեղական գործադիր մարմիններ»,- ցնծում է ադրբեջանական մամուլը, որն ակնդետ հետեւում էր Վաղարշապատի ընտրություններին՝ Փաշինյանին սատարելու բացահայտ դիրքորոշմամբ:

«Իհարկե, այն բանից հետո, երբ Փաշինյանի կողմնակիցները պարտվեցին մի քանի համայնքում, այդ թվում՝ Հայաստանի երկրորդ խոշորագույն քաղաքում՝ Գյումրիում, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում, նման ընտրությունների արդյունքները բավարար են շամպայնի բաժակաճառի համար: Սակայն կան այլ, շատ ավելի հետաքրքիր հանգամանքներ: Վաղարշապատը, որն ավելի հայտնի է որպես Էջմիածին, Հայաստանի «եկեղեցական մայրաքաղաքն» է: Այստեղ է գտնվում Գարեգին Բ կաթողիկոսի նստավայրը՝ Էջմիածնի վանքը, եւ այստեղ են պահվում Հայ եկեղեցու հիմնական մասունքները՝ սկսած «Ճակատագրի նիզակից», ըստ տեղի հոգեւորականների, մինչեւ հսկայական ոսկե խաչ, այն ոսկին, որի համար հայ զբոսաշրջիկներն ու ուխտավորները խորհրդային դարաշրջանում արտասահմանից մաքսանենգ ճանապարհով Հայաստան էին ներմուծում»,- զառանցում է ադրբեջանական կայքը:

«Մինվալը» նաեւ հավելում է. «Ներկայիս իրավիճակում Վաղարշապատում հաջողությունը կրկնակի հաղթանակ է Փաշինյանի համար: Նրա կառավարությունը, պետք է նշել, վաղուց պատերազմ է մղում Հայ եկեղեցու, ավելի ճիշտ՝ նրա ղեկավարության դեմ: Սկզբում հոգեւորականությունը փորձեց գլխավորել վարչապետի դեմ ժողովրդական բողոքի ցույցը, որին մեղադրում էին դավաճանության մեջ: Այնուհետեւ Փաշինյանը հայտարարեց Գարեգին Բ կաթողիկոսին (ավազանի անվամբ՝ Կտրիճ Ներսիսյան) Հայ եկեղեցու ղեկավարի պաշտոնից հեռացնելու մտադրության մասին: Հայաստանի կառավարությունը սկզբունքորեն չունի դա անելու լիազորություններ: Դատելով բազմաթիվ անուղղակի ցուցումներից, նոր սահմանադրության նախագիծը, որը Փաշինյանը նախատեսում է հանրաքվեի դնել 2026 թվականի հունիսին՝ խորհրդարանական ընտրությունների հետ միաժամանակ, ինչպես արդեն նշել է վարչապետը, կներառի մի կետ, որը կառավարությանը կտա կաթողիկոսի թեկնածուին որոշելու վերջնական իրավունք: Սա նշանակում է, որ այդ ժամանակ պաշտոնը պետք է թափուր լինի»:

«Տեսականորեն, այս ամենը Հայաստանի ներքին գործերն են: Բայց իրականում եկեղեցու ղեկավարությունն է, որը ներկայում վրեժ է լուծում: Կան բազմաթիվ ապացույցներ, որոնք հաստատում են դա: Սա ներառում է «Արցախյան թեմի» պահպանումը եկեղեցական կառուցվածքում, որը ստեղծվել է ադրբեջանական հողերի օկուպացիայից հետո, քարոզներում «Արցախ» անվան պարբերաբար հիշատակումը եւ, այսպես ասած, աշխարհիկ ռեւանշիստների, հիմնականում դաշնակցականների, բացահայտ քաղաքական աջակցությունը: Անկեղծ ասած, շատ եկեղեցական հոգեւորականներ նույնպես դեմ են գործող կաթողիկոսին: Գարեգին II-ը նրանց կարգալույծ արեց, բայց նրանք հրաժարական չեն տալիս, նրանք պատարագներ են մատուցում, եւ Փաշինյանը մասնակցում է այդ պատարագներին»,- գրում է Նիկոլին սատարող ադրբեջանական կայքը:

Մնացածը՝ դուք խորհեք...

**Արա ԱԼՈՅԱՆ**

# ՍԱ 26 ԹՎԱԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ «ԳԼԽԱՎՈՐ ՌԵՊԵՏԻՑԻԱՆ» ԷՐ

Ինչպես հայտնի է, նոյեմբերի 16-ին Հայաստանի հոգեւոր մայրաքաղաքում տեղի ունեցան ավագանու ընտրություններ: Կովկասյան քաղաքականության մեջ ավելի ու ավելի հաճախ տեղական մակարդակի ընտրությունները սկսել են դիտարկվել որպես համապետական կարեւորության իրադարձություններ: Այդպես Թբիլիսիի քաղաքապետի՝ վերջերս տեղի ունեցած ընտրություններն էին կամ աբխազական շրջանային պատգամավորական խորհուրդների ընտրությունները: Այս մասին գրում է ռուս քաղաքագետ Սերգեյ Մարկեդոնովն իր վերլուծական հոդվածում: «Ինչով էին կարեւոր Վաղարշապատի ընտրությունները թե՛ իշխանությունների, թե՛ ընդդիմության եւ թե՛ արտաքին դիտորդների համար»,- հռետորական հարց է բարձրացնում քաղաքագետը: «Նախ, սկսենք քաղաքական աշխարհագրությունից: Վաղարշապատը Երեւանին շատ մոտ գտնվող քաղաք է՝ Արմավիրի մարզում: Հեռավորությունը Երեւանից մոտ 20 կմ է: Այդ քաղաքի շատ բնակիչներ աշխատում են Երեւանում, այնտեղ են ներգրավված քաղաքական կամ հասարակական կյանքին: Շատերն էլ «երկու տան» սկզբունքով են ապրում»,- գրում է փորձագետը:

Բացի այդ, ըստ նրա, Վաղարշապատի ընտրությունները տեղի ունեցան իշխանությունների համար երկու շատ զգայուն ՏԻՄ ընտրություններում կրած պարտությունից հետո՝ Գյումրիում եւ Երեւանի մերձակայքում գտնվող Փարաքարում: Իրավիճակին հավելյալ սրություն է հաղորդում նաեւ Նիկոլ Փաշինյանի եւ Գարեգին 2-րդ Ամենայն հայոց կաթողիկոսի միջեւ եղած հակամարտությունը: Ու հարցը միայն այն չէ, թե Հայ եկեղեցու ղեկավարին մեղադրում են դոգմաների եւ նորմերի խախտման մեջ: Վերջերս Երեւանում դատարանն ընտրական խախտումների մեջ մեղադրեց կաթողիկոսի եղբորը, եւ նա կալանավորվեց մեկ ամսով: Եկեղեցու հետ հակամարտությունը, անձնականից բացի, նաեւ ռազմավարական նշանակություն ունի: Նիկոլ Փաշինյանը կառուցում է «իրական Հայաստանը», որը ենթադրում է հայկական քաղաքականության բազմաթիվ ավանդական հենասյուներից հրաժարում, այդ թվում՝ նաեւ հրաժարում Առաքելական եկեղեցու հետ ունեցած առանձնահատուկ հարաբերություններից: Այս բոլոր փաստերն առանձին-առանձին եւ բոլորը միասին վերցրած, պայմանավորել են Երեւանի մոտակայքում եղած Վաղարշապատի ընտրական պրոցեսների հանդեպ հատուկ հետաքրքրությունը: Ավագանու 33 անդամի մանդատի համար պայքարեց 8 քաղաքական ուժ, սակայն, ընտրությունների արդյունքներով, ավագանու կազմ մտավ 3-ը՝ իշխանամետ ՔՊ-ն՝ 19 մանդատով, եւ ընդդիմությունը՝ ի դեմս «Հաղթանակի» եւ «Մայր Հայաստանի»՝ 14 մանդատով:

Հայաստանի օրենսդրությունը, ուժերի նման հարաբերակցությամբ, թույլ է տալիս իշխող կուսակցությանը՝ ձեւավորել համայնքային գործադիր իշխանություն եւ առաջադրել քաղաքապետ: Հանրագումարի բերելով, կարելի է արձանագրել, որ Նիկոլ Փաշինյանի կառավարությունը ցուցաբերում է նախանձելի սթրեսակայունություն: Չնայած այն բանին, որ նրա աջակցության վարկանիշը բարձր չէ, եւ մի շարք զգայուն համայնքային ընտրություններում պարտություն է կրել՝ արձանագրում է Մարկեդոնովը: Սակայն այնպես չէ, որ դա վարչապետի ներկայացրած գաղափարախոսության կամ ընտրական ծրագրի շնորհքն է: Իշխանությունները, ընտրական մեթոդների հետ մեկտեղ, ակտիվորեն կիրառել են նաեւ վարչական ռեսուրսն օգտագործելու սկզբունքը: Նաեւ՝ կառավարության հակառակորդների հանդեպ սկսել են հետապնդումներ, ձերբակալություններ՝ տարբեր մակարդակներում: Գյումրու քաղաքապետ Վարդան Ղուկասյանի ձերբակալությունը դրա վառ ապացույցն է: Մյուս կողմից, ընդդիմության հեղինակությունն ու վարկանիշն էլ չաճեցին: Վաղարշապատի ընտրությունները կարելի է թերեւս համարել 26 թվականի պառլամենտական ընտրություններից առաջ «գլխավոր փորձը»:

**Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ԿԱՐԾԻՔ

# ԻՆՉՈ՞Ւ ՉԻ ԱՐԳԵԼՎՈՒՄ ՃԱՅԹՈՒԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԸ, Ո՞Վ Է ՀԱՐՍՏԱՆՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՆՔՆԱՎՆԱՍՈՒՄԻՑ

Դեռ Ամանորի նախաշեմը չի մոտեցել, բայց առեւտրային վայրերում արդեն սկսվել է ճայթուկների, այսպես կոչված՝ բոմբերի վաճառքն անչափահասներին: Դպրոցականները տունդարձի ճանապարհին անպայման «բոմբեր» են գնում եւ պայթեցնում՝ խաթարելով Երեւանի անդորրը: Մենք բազմաթիվ բողոքներ ենք ստացել դիվադադար եղած երեւանցիներից, որոնք սրտի տարատեսակ արատներ ունեն, առողջական խնդիրներ կամ մանկահասակ երեխաներ, կամ էլ կենդանիներ, որոնք, այսահարված, փախչում են պայթուցիկի ճայթյուններից:

«Ինչքան գիտեմ, օրենքով այդ պայթուցիկները չի կարելի այդպես ազատ վաճառել: Իսկ ինչո՞ւ են այդպես ամեն քայլափոխի վաճառվում: Սարսափելի է եւ մարդկանց, եւ կենդանիների համար: Ամբողջ օրը հանգիստ չունենք պայթյուններից: Խնդրանքս. պետք է այս հարցը կտրուկ լուծել, որովհետեւ մարդկանց առողջությանն էլ է վերաբերում»,- գանգատվում է Հասմիկ Երեմյանը: Աստղիկ անունով ՖԲ օգտատերն էլ գրում է «Հրապարակին». «Մարդ չի կարողանում տանը երեխա քնեցնի: Ո՛չ հանգիստ, ո՛չ դադար ունի իր տան մեջ: Մեզ մոտ արդեն սկսվել են պայթյունները, ու որ ասում ես էլ երեխաներին՝ մի արեք, ծնողները վրա են տալիս, թե խի՞ ես խոսում, ուզում են, անում են»:

«Տոներին բոլոր խանութներում, փողոցներում, «Սուրմալու», «Փեթակ» տոնավաճառում բոմբերը վաճառում են: Էլ ո՞րն ասենք: Եթե անկեղծ ասեմ, ես՝ ինքս, վախենում եմ փողոց դուրս գալուց»,- պատասպանում է մեզ Գոգա Ն.-ն: Երեւանցի Նինել Նազարյանն էլ գրում է մեզ. «Բոլոր տեղերում էլ վաճառում են, ամենավատ բանն է եւ երեխաների, եւ կենդանիների համար: Քանի դեպք է գրանցվել, բայց մեկ է, տգետի պես բերում ու բերում են՝ իրենց փողի համար: Եթե վերահսկողությունը խիստ լինի, մի քանի միլիոն տուգանք սահմանեն, էլ չեն բերի: Մեր ժողովրդին մենակ տուգանքով կարելի է բան հասկացնել, ուրիշ ձեւ չեն հասկանում»:

«Խայտառակություն է: Նորից պետք է արգելել այդ ճայթուկները: Մեր շենքից մի երեխու մատն էր դրանից պոկվել ընկել»,- գրում է Հասմիկ Պոշոտյանը: Մեկ այլ կին էլ՝ Պայծառ Միսակյանը, պատմում է, որ հարեւաններից մեկի երեխայի աչքն է վնասվել պետարդի պայթյունից: ««Էրեբունի մոլ» հանրախանութի դիմաց վաճառում են: Երեկ մի տարեկան երեխաս քնից վեր թռավ էդ անտերի ձենից: Պետք է արգելեն, ինչպես Եվրոպայում արգելեցին»,- նշում է նա:

«Ամեն տեսակի բոմբեր էլ ունեմ: Ամեն տեղ էլ կա, «Սուրմալու», «Փեթակ», ես չգիտեմ, որ արգելված ա, թող արգելեն, ես չեմ վաճառի»: Շիրակի 3 հասցեում գտնվող խաղալիքների խանութում ասացին, որ «բոմբեր» կան կողքի ծաղկի սրահում: Ծաղկի սրահի վաճառողն էլ ասաց, որ դեռ չունի, բայց ամանորից առաջ բերելու է: Մեր հորդորին, որ չի կարելի դրանք երեխաներին վաճառել, նա արձագանքեց, թե ինքը լավ էլ վաճառելու է, ունի լիցենզիա: «Ինչ ուզում եք՝ արեք, մեկ ա, ծախելու եմ»,- ասաց երիտասարդը:

Արգելվա՞ծ է արդյոք կենցաղային պայթուցիկի վաճառքը եւ ո՞ր ակտով: Պետական մարմիններն իրար վրա էին գցում այս հարցի պատասխանը: Շուկայի վերահսկողության եւ առողջապահության եւ աշխատանքի տեսչական մարմինները «թեմայի մեջ չէին», մեզ ուղղորդեցին Քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմին: Այս մարմնի խոսնակ **Ելենա Զոհրաբյանը** մեզ պատասխանում է. «Հատուկ նշանակության հրավառության նյութեր եւ կենցաղային նշանակության նյութեր, այն, որ երեխաներն են պայթեցնում, դրանց մասով կա անչափահասներին չվաճառելու արգելք: Վերահսկողությունն իրականացնում է ներքին գործերի նախարարությունը: Եթե ոստիկանությունն ունի փաստեր, որ տվյալ խանութը ճայթուկներ է վաճառել անչափահասին, դրանց վերաբերյալ վարչական վարույթ են հարուցում»: ՆԳ նախարարությունից պատասխանեցին, որ դա այդպես չէ: «Դա վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության խնդիր է: Հոդված 219.1-ով վերահսկողությունը տարածքային կառավարման մարմինների եւ տեղական ինքնակառավարման մարմինների տիրույթում է»,- պատասխանեցին ՆԳՆ լրատվականից: Նշանակում է՝ Երեւան քաղաքի դեպքում անչափահասներին վաճառելու արգելքը պետք է վերահսկի Երեւանի քաղաքապետարանը: Մենք կլսենք, իհարկե, նաեւ քաղաքապետարանին, որը, ակնհայտ է, չի իրականացնում իր գործառույթը: Ի՞նչ են մտածում այս ամենի մասին առողջապահության նախարարությունում, չէ՞ որ թիրախում երեխաների առողջությունն է: Այնտեղից հայտնեցին, որ «թեմային չեն տիրապետում»: Այն դեպքում, երբ դեռ 2020 թվականին առողջապահության նախարարությունն օրենքի նախագիծ էր մշակել, որով արգելվելու էր ճայթուկների վաճառքը: Նախատեսվում էր փոփոխություններ կատարել «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքում: Ճայթուկ ասելով՝ հաշվի են առնվելու այն բոլոր պայթուցիկները, որոնք թելային գլանակ ունեն, եւ որոնց ծայրին այրման համար հատուկ քսուկ կա: «Եթե օրենքի ընդունումից հետո որեւէ խանութ ճայթուկ վաճառի, կպարտավորվի նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսնապատիկի չափով տուգանք վճարել»,- զգուշացնում էր նախարարությունը, իսկ այն ժամանակվա առողջապահության նախարար Արսեն Թորոսյանն իր ՖԲ էջին նույնիսկ անչափահասի՝ պայթյունից ջնջված մատների ռենտգեն նկար էր տեղադրել: Մատները կորցրած երեխայի լուսանկարը շրջում էր մամուլում, եւ վիճակագրություն էր հրապարակվում, որ ամանորյա տոներին 95 մարդ է մարմնական վնասվածքներ ստացել, որոնց թվում՝ 40 երեխա: Առողջապահության եւ աշխատանքի հարցերով տեսչությունից պատասխանեցին, որ պայթուցիկի վաճառքի հարցն իրենց հսկողության տիրույթում չէ, շուկայի վերահսկողության տեսչական մարմնից՝ նույնը: Խնդրին, ինչպես նաեւ գալիք ամանորի դժբախտ պատահարների վիճակագրությանը, կշարունակենք հետեւել:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

# ԱՌԱՋԻՆ ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ՖԻԼՄԵՐԸ ՉՈՒՆԵԻՆ ՌԵԺԻՍՈՐ՝ ՕՊԵՐԱՏՈՐՆ ԷՐ ՀԵՂԻՆԱԿԸ

Հայկական վավերագրական կինոն պաշտոնապես հիմնադրվել է 1924 թվականին: Մինչ այդ Հայաստանում, ինչպես նաեւ նրա սահմաններից դուրս, եղել են որոշ վավերագրական կինոնյութեր, որոնք ներկայացրել են ժողովրդի կյանքն ու կենցաղը: Առաջին հայկական կինոժապավենը կարելի է համարել 1910 թվականին Ամենայն հայոց Մատթեոս Իզմիրլյան կաթողիկոսի հուղարկավորության վավերագրությունը Սբ Էջմիածնում, նկարահանումներ են արվել նաեւ Ռոստովում, Արեւմտյան Հայաստանում: Սակայն դրանք հայության առանձին հատվածների կամ անհատների կյանքի ու գործունեության մասին էին, իսկ առաջին հայկական վավերագրական կինոնկարը, ինչպես գրում է Գ. Փաշայանն իր «Հայ վավերագրական կինոն. պատմության էջեր» հոդվածում, «Խորհրդային Հայաստանն» էր՝ նկարահանված Չուբարի, Դզնունու եւ Ֆոլյանի սցենարով, Հայաստանի «Պետֆոտոկինո»-ի մի խումբ օպերատորների կողմից:

Կինոնկարը նվիրված էր Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման չորրորդ տարեդարձին: Ֆիլմը, հասկանալի է, ուներ ընդգծված գաղափարական-քաղաքական բնույթ եւ ներկայացնում էր խորհրդային իշխանության ժամանակ վերածնվող Հայաստանը: Եվ առաջին անգամ փորձ էր արվում առկա օբյեկտիվ իրականությունը մեկնաբանել գեղարվեստական-պատկերային միջոցներով: Առաջին փորձը, կարելի է ասել, հաջողված էր, եւ հայ կինովավերագրողները ձեռնամուխ են լինում նոր վավերագրական ֆիլմերի ստեղծմանը: 1924-26 թվականներին նկարահանվում են «Ա. Մյասնիկյանի, Գ. Աթարբեկյանի եւ Ս. Մոգիլեւսկու հուղարկավորությունը», «Երեւանի ջրհեղեղը» եւ «Դավալուի փախստականների տեղավորումը» ֆիլմերը: Ուշագրավ է այն, որ առաջին վավերագրական կինոնկարները չունեին ռեժիսորներ, միակ ստեղծագործող անձը օպերատորն էր, որը նկարահանումն իրականացնում էր ըստ սցենարի:

Սակայն 1926-ին հայկական վավերագրական կինոյում հայտնվում է նաեւ ռեժիսորը՝ ի դեմս Համո Բեկնազարյանի, որն օպերատոր Ա. Յալովոյի հետ նկարահանում է Լենինականի 26 թվականի երկրաշարժի հետեւանքները: Դրանից հետո արդեն ռեժիսորը դառնում է մշտական ֆիգուր հայկական վավերագրական կինոյում: Հայկական կինոարդյունաբերությունը հենց առաջին քայլերից հաջողություններ է գրանցում: Պաշտոնական զեկուցագրերից հայտնի է, որ այն ժամանակվա 2 կինոնկար՝ «Նամուսն» ու «Զարեն», խորհրդային պետության կինոտարածքում առաջին տեղում են եղել, իսկ «Հայկինոն» կարեւոր դիրք է զբաղեցրել խորհրդային կինոարտադրող ձեռնարկությունների շարքում: Այս հաջողության մեջ, իհարկե, անուրանալի էր Համո Բեկնազարյանի եւ օպերատոր Ա. Յալովոյի ներդրումը: Ընդ որում, արխիվային զեկուցագրերից պարզ է դառնում, որ խորհրդահայ կինոն ոչ միայն գաղափարական-քարոզչական գործիք է եղել ժամանակի իշխանությունների ձեռքին, այլ նաեւ ապահովել է զգալի եկամուտ: 1927-ին արդեն «Հայկինոն» ուներ սեփական արտադրության 63 կինոնկար, ամենահայտնիները «Զարեն» ու «Խորհրդային Հայաստանն» էին: 1930-ականներին արդեն Հայաստանում կինոարդյունաբերությունը ծաղկում էր՝ կար լավ սարքավորումներով կինոստուդիա, ընդարձակ նկարահանման հարթակներ, հագեցած անհրաժեշտ սարքավորումներով: Առաջին հայկական ֆիլմը «Նամուսն» էր, վերջին հայկական համր կինոն՝ «Գիքորը»:

1935-ին էկրան բարձրացավ «Պեպոն», իսկ 36-ին «Հայկինոն» միակն էր, որն աշխատում էր սեփական ձայնատեխնիկական բազայի հիմքի վրա: Այդ ժամանակ էլ սկսվեցին «Տաթեւի բերդը», «Խորհրդային Հայաստանի քսաներորդ տարեդարձը», «Բժիշկ Դավթյան», «Ղուկաս» եւ, ի վերջո՝ «Զանգեզուր» կինոնկարների նկարահանումները: Այս շրջանում նաեւ թրծվեց կադրային բազան, ձեւավորվեց հայկական ազգային կինոմտածողությունը: Հայաստանի խորհրդայնացման 10-րդ տարեդարձի առիթով 1930 թվականին թողարկվեց Բեկնազարյանի «Երկիր Նաիրի» կինոժապավենը, որտեղ ներկայացվեցին ՀԽՍՀ 10-ամյա ձեռքբերումները: Այստեղ ամեն բան կա՝ եւ վավերագրական կինո, եւ խաղարկային կինոյի տարրեր, եւ դերասանների մասնակցությամբ բեմականացումներ: Այս ճանապարհով հայ կինովավերագրողները հետագայում նաեւ սկսեցին իրականությունը ներկայացնել այլաբանական պատկերային կերպով: Նրանք նաեւ Հայրենական պատերազմի ժամանակ ռազմաճակատներում էին նկարահանումներ կատարում՝ ցույց տալով հայկական զորախմբերի գործողությունները Կերչում: Հայրենական մեծ պատերազմի ժամանակ թողարկվել է «Խորհրդային Հայաստան» կինոհանդեսի 54 համար, նկարահանվել է 7 լիարժեք վավերագրական կինոնկար: Հայ կինովավերագրողների նյութերը ներառվում էին նաեւ համամիութենական կինոխրոնիկաներում եւ կինոհանդեսներում: Երեւանյան ստուդիայի կողմից թողարկվել էին նաեւ կարճամետրաժ վավերագրական ժապավեններ, որտեղ օգտագործվել էին ռազմաճակատային խրոնիկայի կադրեր:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՔՊ-ԱԿԱՆՆԵՐԸ ԲԱՅԱՀԱՅՏ ԸՆՏՐԱԿԱՇԱՌՔ ԷԻՆ ԲԱԺԱՆՈՒՄ, ԵՎ ՍԱ ՏԵՍԵԼ ԵՆ ԲՈԼՈՐԸ

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Վաղարշապատ խոշորացված համայնքի ընտրություններից հետո չեն դադարում քննադատություններն ընդդիմադիր այն ուժերի հասցեին, որոնք չկարողացան հաղթահարել անցողիկ շեմը եւ փաստացի ձայներ փոշիացրին, ինչն ամենաշատը ձեռնտու է իշխող «Քաղպայմանագիր» կուսակցությանը: Հիշեցնենք, որ ավագանի անցել է երեք ուժ՝ ՔՊ, «Հաղթանակ» եւ «Մայր Հայաստան»: Զրուցել ենք «Հայրենիք» կուսակցության ավագանու թեկնածու **Ալվարդ Բարիլուսյանի** հետ:

**- Փաստացի, «Հայրենիք» կուսակցությունը Վաղարշապատի ընտրություններում հավաքեց ընդամենը հազարից ավելի ձայն: Առկա պատկերի մասին ինչ կասեք:**

- Ընդհանուր պատկերն այսպիսին էր, երբ շփվում էինք քաղաքացիների հետ, լսում էինք նրանց դժգոհությունները, լրիվ այլ ակնկալիքներ ունեին: Այդ մասին են վկայում մեր բազմաթիվ տեսանյութերը, որտեղ մարդիկ մոտենում են մեզ, տարբեր մտահոգություններով են հանդես գալիս: Այն բաց դրված է բոլորի համար: Շատերը՝ մեծամասնությունը, դժգոհ են ներկա իշխանությունից, շատերը հիշատակում էին Էջմիածնի նախկին քաղաքապետ Դիանա Գասպարյանին, խոսում էին այն մասին, թե ինչեր է արել նա: Մարդիկ պնդում էին, որ նա կոռուպցիայի մեջ է թաթախված եղել, խոսում էին նրա ամուսնու հետ կապված սպանության դեպքից, որը տեղի էր ունեցել բենզալցակայանում: Մեծամասնությունը նման գնահատականներ էր հնչեցնում եւ դժգոհում ՔՊ-ից: Դրան հաջորդեցին ընտրությունները: Լույսերն անջատեցին, մենք արդեն պատկերացրինք, թե ինչեր են անելու: 14.05 տեղամասում մասնակցեցի հաշվարկին, հենց հիմա ձեռքիս տակ ունեմ փաստեր, որ տուփերը պլոմբված չեն եղել, ու նման լիքը երեւույթներ:

**- Հավանաբար, Դուք էլ լսած կլինեք, որ քիչ ձայներ հավաքած ուժերին մեղադրում են ՔՊ-ի օգտին աշխատելու մեջ: Որոշ ընդդիմադիրների ձայները փոշիացան, եւ նրանց կասկածում են, որ դա միտումնավոր է արվել, որպեսզի ՔՊ-ն հաղթի: Իհարկե, խոսքը մյուս ուժերի մասին է՝ ոչ «Հայրենիքի», բայց կարող են նաեւ ձեզ մեղադրել:**

- Չկա նման բան: Իմ թիմի անունից վստահաբար ասում եմ՝ բոլորն էլ ընդդիմադիր են: Ես անվերապահորեն հավատում եմ «Հայրենիք» կուսակցությանը: Թիմում ամեն մեկը եղել է ազնվության տիպար: Ես սա ասում եմ վստահաբար: Կարող եք ինքներդ հետաքրքրվել եւ տեսնել, որ ոչ մի բանի մեջ մենք թաթախված չենք եղել: Ասեմ ավելին՝ ժողովրդի խնդրանքով ենք մասնակցել ընտրություններին: Շատերն ասում էին՝ չկամ մի մտավորական, որը ոտքի է կանգնելու եւ դեմ է դուրս գալու իշխանություններին: Խաչիկ Մանուկյանը ոտքի կանգնեց ժողովրդի խնդրանքով, մենք էլ նրա կողքին կանգնեցինք, բայց եղավ այն, ինչ եղավ: Ընտրակեղծիքներով են հաղթել, ՔՊ-ականները բացահայտ ընտրակաշառք էին բաժանում, սա տեսել են բոլորը, Դուք երբեւիցե լսե՞լ եք, որ մենք ընտրակաշառք բաժանենք, ոչ, ուղղակի փորձեցինք անձնվիրաբար լինել մեր քաղաքացիների կողքին, մնացածը թողնում ենք ժողովրդի դատին:

## Սոխ, ծիծակ ու թթու շուշան՝ երեխաների համար

Համայնքապետարանների 2025 թ. գնումների պլանին ծանոթանալիս ամենատարբեր ապրանքատեսակների կարելի է հանդիպել: Լոռվա մարզի «Գյուլագարակ համայնքի ընդհանուր սպասարկում» ՀՈԱԿ-ի 2025 թվականի սեպտեմբերի 30-ի գնումների պլանը բավականին համեստ, բայց խայտաբղետ է ստացվել: Առաջին երկու էջում աշխատանքում անհրաժեշտ իրերն ու ծառայություններն են, հաջորդիվ պատկերը փոխվում է: Գնման պլանների ցուցակից առանձնացնում ենք ապրանքներից մի քանիսը 1լ ձեթ՝ 800 դրամ, 1 հատ կերակրի աղ՝ 200 դրամ, 4 հատ կծու ծիծակ՝ 600 դրամ, 2 հատ կիտրոն՝ 600 դրամ, 5 հատ մակկոֆե, 1 հատ երշիկ՝ 1700 դրամ, շուշանի թթու՝ 1 բանկա, վարունգի թթու՝ 1 բանկա, 1 հատ անկոր կարագ, 1 տուփ վաֆլի՝ 750 դրամ, 1 հատ կետչուպ՝ 450 դրամ, 1 կգ սոխ՝ 350 դրամ, 1 կգ արեւածաղիկ, շոկոլադե կոնֆետներ, բանջարեղեն, խմորեղեն, հաց, լավաշ, խոզի փափկամիս, հավի թեւ, գազավորված հյութեր եւ այլն: Ցուցակից պարզ է դառնում, որ համայնքապետարանում պատրաստվում են ինչ-որ առիթ նշելու: Գյուլագարակի համայնքապետ՝ ՔՊ-ական **Խաչիկ Վարդանյանին** հարցրինք, թե ինչ գնումների մասին է խոսքը: «Երեւի՝ մանկապարտեզի»: Մանկապարտեզի երեխաների համար են թթու դրած շուշանն ու կծու ծիծակը: «Չէ, Ձեզ կզանգի գնումների մասնագետը եւ ավելի ստույգ կասի»: Համայնքապետարանից մեզ ասացին, որ այդ գնումների հետ իրենք կապ չունեն, դրանք «Գյուլագարակ համայնքի ընդհանուր սպասարկում» ՀՈԱԿ-ի գնումներն են: Եթե ՀՈԱԿ է, ուրեմն համայնքային ենթակայության տակ է գտնվում, ի՞նչ գործառույթ է իրականացնում: «Համայնքում աղբահանում է իրականացնում, այդ գնումներն էլ, բերքի տոնի հետ կապված, ՀՈԱԿ-ն է արել»: Նշենք, որ հոկտեմբերի 18-ին Լոռու մարզպետի աշխատակազմի նախաձեռնությամբ Դսեղի գյուղամիջյան հրապարակում տեղի է ունեցել «Բերքի տոն-2025» տոնահանդեսը: Եղել է համերգային ծրագիր, բացվել է 40 տաղավար, որում ներկայացվել է մարզի տեղական արտադրանքը, իսկ լավագույն գյուղատնտեսները պարգեւատրվել են: Իսկ թե ՀՈԱԿ-ի այս գնումներն ինչ կապ ունեին բերքի տոնի հետ, մեզ անհասկանալի մնաց:

**Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 20.11.2025թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

# ՍՈԴՈՄԻՑ ԱՆԴԻՆ ԳՈՄՈՐՆ Է

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

Սոդոմ («այրվող») եւ Գոմոր («ընկղմում, հեղեղում»)… Ըստ Հին Կտակարանի ավանդության, սրանք հնագույն քաղաքներ են Սիդդիմի դաշտում, որոնք երկու այլ քաղաքների հետ կործանվել են «երկնային հրով», ապա ծածկվել Սոդոմա ծովակի (Մեռյալ ծովի) ջրով՝ ի պատիժ իրենց բնակիչների մեղքերի: Թշնամիներին անիծելիս՝ հրեա մարգարեները նրանց հաճախակի են հիշեցնում Սոդոմի եւ Գոմորի կործանումը: Սուրբ Գրոց ավանդություններում Սոդոմը եւ Գոմորը խորհրդանշում է աստվածային այն սոսկալի պատուհասը, որի մեջ իբր իրենց մոտալուտ կործանումը պիտի գտնեն զեխությամբ ու հեշտասիրությամբ ապրող բոլոր մեղսագործ մարդիկ: Որոշ ուսումնասիրողներ ենթադրում են, որ Սոդոմի եւ Գոմորի ավանդությունն ունի պատմական հիմք՝ համարելով, որ ժողովրդի հիշողության մեջ արտացոլվել է ինչ-որ հնագույն տարերային աղետի հետք Մեռյալ ծովի շրջանում, որի հարավային ափերին հայտնաբերվել են հրաբխային մնացորդներ:

Հետաքրքիր կլիներ իմանալ, թե ինչ են զգացել այդ քաղաքների բնակիչները, երբ կենդանի-կենդանի հայտնվում էին կրակների մեջ կամ ընկղմվում ծովում: Մենք՝ հայերս, կարծում եմ, նման իրավիճակում ավելի շուտ կսկսեինք իրար ուտել, քան կրակներից դուրս վազել ու փրկություն որոնել ծովի բարձրացող ջրերից: Մեր «պատմության» վերջին 7 տարիները հենց դա են փաստում: Ինչ ասես՝ չտեսանք, բայց ադեկվատ պահվածք ցուցաբերելու փոխարեն իրար ենք ուտում, իրար կոկորդ կրծում: Ցավի զգացողություն ասես չունենք, չնայած այդ զգացողությունը Աստված մարդուն է տվել, երբ տեսել է, թե մարդն ինչպես է ժպտում ամեհի վագրի երախում: Գուցե մենք մարդու ուրիշ տեսակ ենք, գուցե մա՞րդ չենք, առհասարակ:

2018-ին Հայաստանի բոլոր գյուղերն ու քաղաքները հայտնվեցին Սոդոմի եւ Գոմորի ճակատագիրը կրկնելու սպառնալիքի առաջ: 2020 թվականի սեպտեմբերի 27-ից Սոդոմ-Գոմորն սկսեց իրականություն դառնալ Հայաստանում: Կորուստներ, կորուստներ, կորուստներ, ձախողումներ, խայտառակություն, հետապնդումներ, բանտ, փախուստ, ցույց, միտինգ, չագուճ, բորդյուր, ասֆալտ, պատերին ծեփված մարդկային մարմիններ, թուք, հայհոյանք… Հասել ենք եկեղեցուն: Աստված, որ սկսել էր մեզ պատժել, դարձել է առավել անագորույն: Փրկության հույսն ամեն օրվա հետ մեռնում է… Մեզ չկա այլեւս ներում: Եվ այս իրավիճակում, չգիտես ում վրա չարացած, իրար ենք ուտում: Հետաքրքիր է՝ Սոդոմ-Գոմորի բնակիչներն ի՞նչ են արել այդ օրերին… Ի վերջո, այնտեղ էլ իշխանություն եւ ժողովուրդ է եղել… Բոլո՞ր էին մեղսագործ եւ բոլո՞ր են իրենց կործանումը գտել զեխության ու հեշտասիրության պատճառով: Ասում են՝ Աստված նաեւ դատավոր է: Արդյոք նա չի՞ փորձել տարանջատում կատարել, թացը չորից ջոկել, մեղավորներին՝ անմեղներից: Անմեղներ չկայի՞ն: Երեւի՝ չկային… Ճիշտ այնպես, ինչպես մեզանում անմեղներ չկան: Մենք արդա՞ր վարվեցինք Նիկոլի նման հակա-Քրիստոսին իշխանություն վստահելով, մենք արդա՞ր գտնվեցինք պատերազմում զոհված մեր հերոսների հիշատակի հանդեպ, մենք փորձեցի՞նք վռնդել հակա-Քրիստոսին, որ պատերազմից հետո, շողոմ բառերով մեզ լուսավոր ապագա խոստացավ եւ խաղաղություն, մենք ընդվզեցի՞նք, երբ նա Աստծու տված մեր հայրենիքը սկսեց մաս-մաս նվիրել թշնամուն: Հիմա էլ պլշած դիտում ենք, թե ինչպես է ամեն կիրակի Աստծու մի նոր տուն, մի նոր եկեղեցի պղծում իր պիղծ պատարագներով: Մի հատ հարց տվեք ձեզ՝ իսկ ո՞վ է մեղավոր… Պատասխանը մեկն է՝ մենք: Եվ մեր դեպքում էլ, կարծում եմ, Աստված նույնկերպ է վարվելու կամ արդեն վարվում է: Նա կանգ չի առնելու նույնիսկ կիրակի օրերին: Հույս չունենաք: Անգամ եթե հակա-Քրիստոսը վերանա, ռադ լինի մեր միջից, Աստված իր գործը հասցնելու է մինչեւ վերջ: Այ, այդքան մենք կեղտոտվել ենք, այդքան մեղք ենք գործել, այդքան ուծացվել ենք, մեր ու մանուկ մոռացել:

Հայեր, շարունակենք ուտել զմիմեանս… Այդպես մեր վերջը, գուցե, աննկատ կգա:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am